31. ԽԻԿԱՐԻ ԽԸՍԵՆ

Մեկ ըռընճպար մը ուրին լուծք կէներ։ Տեսավ օր պայէ մ'էն դիուց գիգա, իշեց օր պայի ետևանց լէ զուր հացվորն էկավ, բռռաց ճամբորդին.

— Աղբե՛ր, արի հ'ուտա մատ մը հաց կեր, նոր գնա։ Հանտե իմ հաց լէ էկավ, բալքիմ քու խբսմաթ մեշն է։

Պայեն թողեց զճամբեն, ջոկվավ, էկավ մըտ ըռընճպար։ Ըռընճպար հանեց զհաց, հացվոր լէ բերեց ղապուրն ու զճաշ, դրին օրթեն։

Ճամփորդ հաց կերավ, իշեց օր հացից չորս հինգ չեշիգ համ գիգա. դու մըսի ցորեն, գարի, կորեկ, գլգիլ, տարեկան, աշնցան թավ խառն է հըտ իրար. ձեռ զարկեց սերմնացանի մեջ, իշեց, որ թե սերսուր գարնցան է, հարցուց.

— Աղբեր, ես զիդա բանին կաճպանամ, ղու մաքուր գարնցան կցանիս, էլ հ'որի՞ քու հաց հարիր ըռանկեն է։

— Աղբեր,— ըսեց ըռընճպար,— ես քինե պահիմ, ասսուց ի՞նչ պահիմ, ես կցանիմ, հըմա իմ ցորեն պտուղ չիտա, հ'երդն ապով կցանիմ օր տավրին իտարա էղնի։

— Օր հըմալ է, խրատ մը տամ քղի, կվերո՞ւս զիմ խրատ։

— Հա՛, դու ըսե, թըխ էղնի վըր իմ էրկու աչիչ, հ'որի՞ չըմ վերու։

— Ականջ էրե,— ըսեց ճամբորդ,— հար ինչ կտեսնիս, խըսա մ'էնի, ինչ սպանուկ ջանավար ըռասթ գիգաս, հորե, մըթորկի

գետնի էրես, ու թե հակյար նեղ ընկար, ես Խիկարն իմ, հարցու արի Ստամպոլ, զիս գտի, էլ խընց իմ անուն էվել անուն չկա։

Խիկարն էր, զէդ թամպին տվեց, էլավ գնաց։ Իրկուն օր էղավ, ըռընճպար զուր լուծքն հարձկեց, տվեց ղմալն հ՝առեջ, շիտկվավ դեպի գեղ, մեկ արտաբոյ մը դրռ չը գացեր էր, իշեց օր ճամբու վրեն էրկու հատ խրղրլ կարմիր օձ սպանուկ թալուկ է. վերուց զօձեր վրը խարզնկոթին ու թամաշա էնելին գնաց։ Մեկ լէ գլոխ բանձրցուց, օր հասեր է ուր գուռ։

— Վա՜յ, վա՜յ,— ըսեց,— ես ի՞մալ Խիկարի թամբին չպահեցի, զօձեր չհորեցի ի գետին։

Ըռընճպարն էր շիվար մնաց, չարնաչար էլավ զուր տան ըռուգ փորեց, զօձեր պահեց հոն։

Քնավ, լուսմթի էլավ օր ասսու հրամանքով էդ էրկու օձ լէ էղած մեկ մեկ չինար ծառ, հրմալ օր խընց ձիթխցի մը գերան։

Խրլղ թափան, էկան, մաթ մացին ու հարցուցին.

— Աղբեր, իդա չոր տեղ, էդ պատի ըռգան մեջ էդ ծառեր հ՝ուստե՞ն դուս էկան։

Ըռընճպարն ըսեց.— Որն օր զիմ փետերու օտեն ըսեց, զէն ծառեր կիտամ ուրին, թե չըսեց, հրզար ղուրուշ կառնիմ զիմ փետերու գին։

Ինչ խրտրը հար ինչ փետերու անուն տվին, չկրցան զէդ ծառերու օտեն (ինչենի) հանեն, ժրխո ըռընճպար՝ որն օր չկրներ հաներ, հրզար ղուրուշ կառներ մոտեն։ Մարդն ընգրմալով գոլվաթվորցավ, էղավ թուճար։ Զեռքրվավ ըստապուն ձի առավ, էղավ ծանտր բազրկան մի, գնաց բազրկընուտենի։

Էդ ծառներու ձեն ցրվրավ աշխար, չորս դիուց թափան, էկան օր ըդոնց օտեն գտնեն, մեկ չկրռցավ։

Էդ ջուապ հասավ մեկ ծանտր բազրկնիմ լէ։ Շատ չքշեց, ավուր մեկ էդ բազրկան լէ ուր բեռով, բարձով էկավ դրեց ըդ ըռընճպրրի տան խեջ։ Հարցուց, փնտռեց, սալրղ առավ օր ըռընճպար տուն չէր, ըսեց. «Իդա աղեկ էղավ, հունար մնաց կնկան, բալքի զկնիկ խաբիմ, խոսք քաշիմ մոտեն, հ՝իմնամ զծառերու օտենն»։

Բազրկան էր, էլավ գնաց մեկ փաթմ՝ օլրտավ ծառերու բոլոր՝, իշեց օր ուր խելք բան մը չկտրե զըդոնց օտեն իմնալու, վրը կրնկին դարձավ, մտավ ի մեշ գեղին, հուտա հարցուց, հունա հարցուց, փարա տվեց դես ու դեն, խոլասա, ինչ գլոխ ձի ցավ-

ցում, ղկնիկ խանմիշ էրեց, կնկա հետ մեկնավ։ Մեկ քենիմ օր ընցավ, բազրկան զուր սրռ բացեց կնկան, ըսեց.

— Դու չկը՞ունաս, քու իրիկն օր էկավ, հարցուս, ղծառներու օտեն հ՝իմնաս, ըսիս ընծի, վերում զքզի ու ծառներ տանիմ ի մըր էրկիր։

Կնիկ խոսք տվեց, էդ տեղ խոսքեր ուրանց էրին մեկ ու բագ-լեցին օր իրիկն իդեր։

Էղավ օր մեկ վախթ մը ընցավ, ըռընճպար բազրկնուտենից դարձավ։ Կնիկ նիաթ կախ, նա՛ դնաց հ՝առեջ, նա՛ լէ հարցուց։ Ըռընճպար մնաց մըջ մարախին, հարցուց.

— Տո՛ կնիկ, էդ հո՝րի՞ն էդ հըմալ սևավորեր ես, չէղնի՞ բան մը ձեռ տվե քզի։

— Քու տուն ակոլեցիր,— ըսեց կնիկ,— գացիր դու լէ բա-զբրկնուտենի հլամունսի քար էներ, մկա ղծառներու օտեն ըսեր, զքու յոթ պապու դատումն էրեր ենք, հանդե ամիսմ՝ էղավ բա-զբրկան մը դրրե մըր տան խեջ, քզի բաքլա կէնե։

— Կնիկ, քու ի՞նչ գործն է ղծառներու օտեն հ՝իմնաս, դու հրմա կե՛ր ու խմե, հագի ու պարկե, մկա ո՞րն է քզնե դատում ուղե, քու ի՞նչ ցավն է զէդ բաներու կխառնվիս, դու քու կնկնուտեն էրե, քու տան ու տեղին իշե։

— Չէ,— ըսեց կնիկ,— իդա գամ, իդա էրթամ օր ղծառներու օտեն պտի ըսիս, թ՝օր չըսեցիր, քզի կնկնուտեն չըմ էնի։

— Կնիկ դու ու քու աստված, դադար մացի չարի իրիկուն, օտք ու ձեռք քաշվին, փշում հեհնտի, ուտե զքու գլոխ, կըսիմ, ի՞նչ էնիմ։

Ըռընճպարն էր էլավ, գնաց ի ժամ, հրտ դրբին բազրկան մտավ ներս, կնիկ ակնջկլա տվեց.

— Դու հա՛շ մացի, խոսք տվեց օր թե իրիկվան ըսե. արի զքզի մտում իդա սնտուկ, իրիկվան օր հարցուցի ես, դու զքու ակնջով լսե։

Բազրկան էր, սնտուկ բացեց, մտավ ի մեջ, նստավ ու զան-կըշներ սրեց։ Իրկվան ըռընճպարն էկավ ի տուն, կնիկ լէ յաման չտվեց, խոլասա հարիֆն աճըգավ, չարնաչար զուր սրռ բացեց, ըսեց.

— Քու խաթըր չըմ կոտրի, կնիկ, կըսիմ, հըմա խոսք մոտդի մնա, մըր ծառներ ջուխթ մը օձ ին։— Կնիկ իրեք հաղ թախրիր առավ, բազրկան մըջ սնտկին կլսեր։

Լուսմթի ըռընճպարն էլավ, գնաց ի ժամ, կնիկ զբազրկան հանեց սնտկեն, ճամբըցուց, գնաց։

Բազրկան էր, ուրախնելին գնաց, նստավ ի մաճլիս, ըսեց.

— Խանչեք զէգ ծառներու տեր, ես զընգոր ծառներու օտեն պտի հանիմ։

Խանչին զըրընճպար էկավ, բազրկան հարցուց.

— Հայ, ես ծառներու օտեն պտի հանիմ, մըր շարթն ի՞նչ է։

— Իմ ծառներու գին բալլու է.— ըսեց ըրընճպար։

— Չէ, ես զեն ու զեն չըմ զինա, ես դըլխոռազ կդաչիմ։

— Ինչ օր քու ջան հազ կէնե.— ըսեց ըրընճպար։

— Ես օր գտա զքու ծառներու օտեն, իրեք բան կուզիմ քզնե, թե չգտա, իմ բազրկնուտեն թասլիմ կէնիմ քզի։

— Հա, ես իապուլ էրեցի։

— Ջաղաս՝աթ, գու շհա՞տ իք,— ըսեց բազրկան,— ըտոր ծառներ ջուխթ մը օձ ին։

Ըրընճպար տեղպստեղ լալկավ մնաց, շիվարավ, ճամբախ մը չկրցավ գտներ. էդ գախ Խիկարն ընկավ ուր միտք, օր նեղ ավուր պտի հասներ ուրին. քեթխըրավ մեկ դիու, քերեց զանկջի տակ (ամոթ զգաց) ու ըսեց բազրկնին.

— Ընծի սապր էրև, իմ բաղրկան կես մացեր է չոլ, էրթամ, բերիմ, երբօր էկա՛, ա՛րի, ձեռ թալ զքու իրեք բան առ, գնա։

Ջաղամաթ հախ տվեց զէգ խոսաց. ըրընճպար էլավ, գնաց։

Հեծավ զուր ձին, ձիուն հարաքաթ, խամչուն բարաքաթ. չըփ հա չըփ, Ստամպոլ դո՞ր իս, էկա քզի։ Գնաց, հարցուցելով գտավ զԽիկարի տուն, դեմ իջավ ի դուռ։

Խիկար էլավ հ՝առեջ, բարևնավ, զըրընճպար տարավ ի ներս, հարցուց.

— Աղբեր, քզի չէղնի՞ բան մը ձեռ տվեր է։

Ըրընճպար լէ խըսա էրեց, թե հալ ու հեքիաթ իդըմլա.— Բազըրկան մ՝էկավ, զիմ ծառներու օտեն ճանչցավ, մըկա լէ իրեք բան կուզե հ՝իսնե։

— Քու վիզը կոտրի,— ըսեց Խիկար,— դու չէղնի՞ մարդու բան խըսա էրեր իս։

— Հա վոլլա,— ըսեց,— ես իմ կնկան խսա էրի իմալ էնենք, անզգամ էր ու հայասըզ, ձեռնեն չպրծա։

Օր հըմալ է, քու կնիկն է խըսա էրե, ղէն իրեք բան լէ, օր քզնե կուզե բազրկան, մեկ զքու կնիկն է, էրկուս լէ ծառներ, զիմ խոսք չպայեցիր, հ՝ետի սողին լէ, իդա օրին հասար։

Ըդոնք էդ խոսաց մեջն են, թագավորից մարդ էկավ Խիկարի Լտեն։

Խիկարն ըսեց.— Գնա՛, ըսե, Թագավոր սաղ մնա, էսօր բարի խոնախ ունիմ։

Մարդ գնաց, կրնկին դարձավ էկավ էլ մը։

— Թագավոր կըսե, թըխ զուր բարի խոնախ լէ հետ բերե,— ըսեց։

Խիկար էլավ, առավ զրոընճպար, գնաց. ճամբախ թամպի էրեց.

— Տե՛ս, աղբեր, կէրթանք ի Թագավորի դիվան, չէղնի էլնիս վերին դին նստիս. մեկ լէ հացից ետև ձմերուկ կբերին, չախու կուղին, չէղնի, զրու չախուն իտաս։

Խոճա էլան գացին, օր հասան Թագավորի դիվան, ըոընճպար Խիկարի խըսեն մոռցավ, քշեց, դեմ դնաց վերին գլոխ նստավ. ո՛ր էկավ, կանավ, տեղ տվեց, գնաց ներքին դին, վըր փոչուն նստավ։

Մնաց մեկ խելի վախթ, հաց կերան, պրծան, ձմերուկ էկավ, չախու ուղին, մեկ ձեն չէրեց, էդի էն դին թռավ ու զուր չախուն թալեց, գնաց։ Ձմերուկ կերան, պրծան, Թագավոր զչախուն վերուց ըսեց.

— Մաճլիս, դու շհատ մացեք, իմ խեղինեն օր ճղին, տարան, իդա իմ խեղինի միչի չախուն է։

— Հա՛ մենք շհատ ինք,— ըսին մաճլիսներ։

— Խիկար, հա՛յ գիտի, դո՞ւ լէ դող կպայիս,— ըսեց Թագավոր։

— Հացն ի գինի, տեր կենդանի, ես խապար չունիմ,— ըսեց։

Թագավոր ամր էրեց, օր լուսմթի շուտ էդ ըոընճպրի գլոխ զարկին։

Խիկար խնդրվավ, ըսեց.— Թագավոր ապրած, հյուվի կէնիմ քընե. զիմ խոնախ տո՛ւր, գիշերսի տանիմ, լուսմթի էլմը բերիմ։

— Քու խաթրի համար կթորկիմ, Խիկար, հըմա վախնամ թե խրատ իտաս։

— Աստված շհատ է,— ըսեց,— իմ լեզուն ընդրա հետ պտի չթացվի։

Խիկարն էր, առավ զրոընճպար, գնաց ուր տուն, դռնեն օր մտավ, ըսեց.

— Կնիկ, կնիկ, զէն կատուն բռնե, բի։

Կնիկ զկատուն բռնեց, բերեց։ Խիկար զկատուն առավ ի ձեռ. փամփերով զարկեց դլխուն ու ըսեց.

— Թերմշի կատու, չէ՞ քզի ըսի վերի դին մը նստի, հ՚որի՞ նստար վերին դին, չէ՞ ըսի չախու մի՛ տա, դու զչախուն հ՚որի՞

տվեցիր։ Լուսուն թագավոր քզի կտանե, դու ի՞նչ ջուապ պտի տաս։ (Հայ լէ գլոխ կախե, ինչ որ իշու, ականջ կէնե)։ Գինա՞ս ի՞նչ պտի ըսիս թագավորին, լուսմթի օր քզի կխանչե, կէրթաս, կըսիս թե. «Ջաղամաթ, մաճլիս, իմ պապ բազրկան էր, ֆլան տարին Դեղ-թափա դետուկ զարկին, զիմ պապ սպանին, զմալ հ՚ըմեն քշեցին, տարան, զէդ չախուն լէ իմ պապու սրտի մեջ զարկած են, մկա առեր իմ զչախուն, ընկեր իմ, կօլրտիմ (անտրի կատու, շիտակ ականջ էրե), զիմ պապու խասաս կգաչիմ, օրշնյալ աստված, օր թագավոր էլավ տեր, էլ զուր փողպատ չըմ թորկի։ Կատու, շիտակ ականջ էրի՞ր.— առ հա՛, փամփ լէ կատվի գլխուն։

Կատուն էրեց.— Նաո՛ւ, նաո՛ւ։

Էլան պարկան, լուսմթի թագավորի խավազներ էկան, զէդ ըռընճպար առան, տարան օր խեղդին։ Ըռընճպար գնաց կանավ թագավորի դիվան, ըսեց.

— Ընծի ռուսխաթ տվեք, մեկ էրկու խոսք զրուցիմ, հրպա զիս խեղդեք։

Ռուսխաթ տվեցին. ըռընճպար լէ իմալ օր Խիկար թամպա էրեր էր կատվի, զէն հըմալ լէ խոսաց թագավորի հ՚առեջ։ Թագավոր էլ ճար չգտավ, ըսեց.

— Խանչեք զԽիկար։

Խիկարն առան էկան, թագավոր ըսեց.

— Խի՛կար, աստված քու տուն չակոլե, դու արո՞ւնք էր բերիր թողիր զիմ փողպատ. մըկա ըդ մարդ կանե համ զուր արունք կուզե, համ զուր պապու խասաս. չէղնի՞ դու սորվըցուցեր էր։

Չէ,— հ՚երդվավ Խիկար,— ես ընդրան բան չըմ ըսերի։

Թագավոր տեսավ օր էլ զուր փողպատ չկրոներ պրծուցեր, խանչեց զըռընճպար մեկ ծանտր բազրկան մը, ուր քսուց թասլիմ էրեց ընդրան, նոր ազատավ։

Ըռընճպար էլավ, էկավ Խիկարի մոտ։

— Դե՛,— ըսեց,— ես կէրթամ էրկիր, ի՞նչ խրատ պտի տաս ընծի, օր էն բազրկնի ձեռնեն լէ պրծնիմ։

— Դիտա իշե,— ըսեց Խիկար,— գելնաս, կէրթաս քու էրկու ծառի մեջ արծել մը կկապիս, զկնիկդի կվերուս, դնիս ի վրեն, իրեք հատ սրգտա լէ կզարկիս հ՚առջև, բազրկան օր էկավ, իշեց, էնի լեազ պտի էնե, օր զկնիկ ծառից բերե ցած. ձեռն օր թալեց զիրեք սրգտին բռնեց, դու փետ մը զարկ վըր վըզքոքին, թըխ հ՚ի-գա ցած, քաշե զիրեք սրգտեն, տուր ձեռ ու բոռա, թե. «Խազի՛, մո՛ւֆթի, դու շհատ մացեք, էդի ձեռ թալե իրեք բան, թըխ առնե

զուր էդ իրեք սրգտեն, հեռենաս։ Զբազրկան ըդհըմսլով դիր ի ճամբխու, նոր արի կնկադի բոլոր։ Զէդ լէ՞քզի ըսիմ, կէրթաս մեկ յազզ (սև) ձի մը խամ կկապիս, խորոտ մը կկերցուս, ամիսն օր բոլրավ, կհեծնաս զձին, դելնաս մեկ անվերի սարի մը գլոխ, զկնիկ կիջցուս, կկապիս ձիու պոչ ու կթորկիս սըլսըլեսներու ու քարուքըռեքներու մեջ։ Էդ հըմալ ջազարաթով զէն կսպանիս, նոր կդառնաս, իդաս իմ մոտ, իմ ախչիկ կիտամ քզի, քզի լէ մարդուտենով ճամբու կդնիմ։

Ըռընճպարն էր, էլ չկանավ, գիշեր ցերեկ էրեց մեկ ու հանքակտուր ղինք հասուց ուր տուն։ Զձին կապեց խամ, գնաց արծել մը շինեց զէրկու ծառի մապեն, բերեց զկնիկ գրեց ի վրեն։ Բաղըրկան էկավ, օր զկնիկ բերեր ցած, իմալ օր բռնեց զսրգտեք, զէն տեսար, օր թրփաց ի ցած։ Ըռընճպար հըտ գահուն վազավ, քաշեց զսրգտեք, տվեց ի ձեռ։ Զէն էդ հըմալով ճամբու դրեց։ Նոր էկավ, առավ զկնիկ, տարավ անվերի սարի մը գլոխ, կապեց ձիու պոչ, խամչի մը զարկեց ձիուն, ձին չա էլավ ու առավ զկնիկ, զէդ քար ու քըռեսներու մեջ զըվրռցուց, հըմալ էրեց օր զկնկա փըռտըկներ հանեց հավեն։

Էդ տեղեն ըստապուն դարձավ, էկավ տուն, զուր թատարուք տեսավ, զձիավորտան հազրեց, նոր-թաժա ձիով, ձիավորով, հալվով, զաթով, խորովով գնաց Խիկարի մոտ, զախչիկն առավ։ Խիկար լէ էլավ զուր ախչկա ոտ ու ձեռ տեսավ, օսկով, արծթով, սըհաթով, քոսթքով, խութնով, դալմով, քամարով ճամբու դրեց։

Զախչիկն առան, էկան, նոր պսակեցին վըր ըռընճպրին, յոթն օր, յոթ գիշեր հարսնիք էրին, կերան, խմեցին, ձզի մեջ հիշացին։

«Մրռնիմ քզի, սուրբ Թալինոս, որ տվիր զըդոնց մուրազ»։